

## ԱՆԹՈՒԱՆ ՄԵՅԷ ԵՒ ՔՐԱԶԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ

**Անթուան Մեյէ եւ Հրաչեայ Աճառեան...**

Ահա լեզուաբանական գրականութեան մէջ հեղինակութիւն եւ հռչակ վայելող լեզուաբան եւ բանասէր զոյտ հայագէտներ, որոնց ուսումնասիրութիւնները լրասաւրում են հայագիտութեան ուղին:

Մեյէի կամ Հ. Աճառեանի գիտական վաստակի մասին հրատարակուած ակնարկները, նրանց կենսագրականները ինքնին վկայում են, որ հայ լեզուաբանութեան պատմութեան մէջ այս անունները (ինչպէս նաև Հիմաշ-մանինը) միմեանց հետ սերտ կապուած են մեսրոպատառ մի քանի կոթողներով, որոնցից մէկը, եօթեւանի, կրում է «Հայերէն Արմատական Բառան» համեստ խորագիրը:

Հայ լեզուաբանութեան պատմութեան մէջ (իդ. Աղայեան) որոշ մանրամասնութեամբ եւ վերլուծաբար, իսկ ընդհանուր լեզուաբանութեան պատմութեան մէջ (Գ. Ձառուկեան) ի միջի այլոց ասուած է, որ Հ. Աճառեանը Մեյէի աշակերտն է, նրա հետեւորդը հայերէնի հնդեւրոպական ընույթի, լեզուաբանական եւ հասարակագիտական ուղղութիւնների հարցում: Այս- տեղ մեր նպատակը աւելի համեստ է. աշխատեցինք ցոյց տալ Մեյէի եւ Հ. Աճառեանի՝ ուսուցչի եւ աշակերտի գիտական ազերսակցութեան, փոխադարձ յարգանքից եւ ըմբռանումից, միմեանց գիտական ու մարդկային արժանիքների դէահասումից ծնունդ առած սերտ բարեկամութեան եւ աշխատակցութեան փաստացի արտայայտութիւնները. փաստացիութիւնը պահանջում է մէջըն- բումներ, որոնց համար պէտք է ներողամիտ լինել: Վերջում ներկայացնում ենք Հ. Աճառեանի մի քանի նամակներ՝ ուղղուած Մեյէին:

### Ա Ն Թ Ո Ւ Ա Ն Մ Ե Յ Է

Ֆրանսիացի անուանի լեզուաբան, հնդեւրոպական լեզուաբանութեան ներկայացուցիչ Անքուան Մեյէն ծնունդը է 1866 թ. (վախճ. 1936 թ.): 1897 թ. նրան չորոշուել է բանասիրական գիտութիւնների զոկուորի գիտական աստի- ճան: Ունի քսանչորս անուն լեզուաբանական աշխատութիւն եւ 540 յօդուած: Եղել է մի շաբթ երկրների գիտութիւնների հակագետների խսկական եւ պատ- ուաւոր անդամ:

Մեյէն միաժամանակ մեծագոյն հայագէտներից է. ունի գասական կամ հին հայերէնի (դրաբարի) երկու քերականութիւն (Փրանսերէն եւ գեր- մաններէն լեզուներով), տասնեակ հայագիտական յօդուածներ, համառու ակ- նարկներ. գրախօսել է շատ ու շատ հայագիտական աշխատութիւններ<sup>1</sup>, թշո- թակցել է հայ անուանի գէմքերու հետ: 1891 եւ 1903 թթ. այցելել է Թիֆլիս եւ Հայաստան, իջմիածնի մատենադարանում ուսումնասիրել է հայերէն ձե- ռագրեր: Փարիզի «Արեւելեան լեզուների դպրոց»ում հայերէնի տարրական գիտելիքներն ստանալով հայագէտ Օկիսաթ Քարիէրից եւ մէկ տարի աշակեր-

<sup>1</sup> Մեյէի հայագիտական յօդուածների եւ գրախօսաւթիւնների մեր կազմած ժամա- կածում նրեւանամ գտնվում է մամալի տակ:



ԱՆԹՈՒԱՆ ՄԵԶԵ

տելով անուանի հայագէտներ Հ. Տաշեանին եւ Հ. Ա. Այտընեանին՝ Փարիզի համալսարանում եւ «Փոլեմ որ Թրանս» բարձրագոյն դպրոցում, երկար տարիներ գասաւանդել է հին եւ արդի հայերէն, հայերէնի համեմատական հընչ-չինարանութիւն, աճեցրել է յայտնի գարձած եւրոպացի հայտիտներ, որոնցից են Ֆրանսիացիներ Լուի Մարիէլուր, Ֆրէտէրիք Մաքլէրը, Աթանիսյան Լիոնէն, Ռումինացի Վլատ Պընըցիանուն եւ ուրիշներ։ Նրա հայադիտական վասակի վերլուծումից յետոյ, պրոֆ. է. Աղայեանը եզրակացնում է. «Մեջի հայագիտական հետազօտութիւնները հաստատապէս մտել են հայոց լեզուի ուսումնասիրութիւնները ոչ միայն մասյուն են իրենց բարձր արժէքով, այլև իրենց այդ խորր, գիտական բնոյթով օրինակ են ծառայում թէ ինչպէս պէտք է ուսումնասիրել լեզուական երևոյթները։ Մեյէն հայ լեզուարանութեան պատմութեան մէջ մտած մէծագոյն լեզուարաններից մէկն է» («Հայ լեզուարանութեան պատմութիւն», Հու. Ա., էջ 350)։

### Հ. ԱՃԱՌԵԱՆԸՆՔ ՄԵՅԷԿԻ ԱՇԱԿԵՐԾ

1895 թ., երբ «Երէկի հրաշեան, Սամաթիոյ վարժարանի անխօսուկ», զրասեղանին զամուած աշակէրոն<sup>2</sup> Պոլսի Կեդրոնական վարժարանի փայլուն շրջանաւարտը, ուսումնա ծարաւի հայ երիտասարդը լեզուարանական բարձրագոյն կրթութիւն ստանալու համար մէկնում է Փարիզ, Մեյէն Սորպոնում գեռւու 1890 թուականից դասաւանդում էր լեզուարանական մի քանի սուարկայ, յատկապէս համեմատական քերականութիւն։ Զանազան երկրներից դալիս էին նրան ունկնդրելու։ Այս դիտնական դասախոսով հրապարաւում է նաև Հ. Աճառեանը եւ մտնում նրա ամենայարատել աշակէրոնների շարքը։ Ասում ենք ամենայարատել, որովհետեւ հաղուազիւտ են եղել Մեյէի օտարերկրեայ աշակէրոնները, որոնք նրա խիստ դիտական դասընթացներին կարողացել են հետեւել մէկ կամ մի քանի տարի եւ իրենց հայրենիքն են վերադարձել բարձրագոյն կրթութեան վկայականուն, իրենց հերթին դարձել անուանի դասախոսներ, ծանրակշիռ դիտնականներ։ Հ. Աճառեանը Մեյէին աշակէրտել է 1895—1898 թուերին<sup>3</sup>։

Հ. Աճառեանը «Կեանիս յաշերից» իր գրքում (Երեւան, 1967) նկարագրել է իր առաջին հանդիպումը Մեյէի հետ, խօսել նրանից լսած դասախոսութիւնների մասին։ Հետեւել քաղաքացիութեալ բերում ենք այդ գրքից։

Սորպոնում եղիպատուքէտ Մասփերոյի դասախոսութիւնից յետոյ ամենքը ցըւում են։ «Ես էլ գուրս եկայ դասարանից — գրում է Հ. Աճառեանը, եւ տեսայ մի ... մարդ, այժմ մօրուքով, այսեւը ուսած թաթարի նման, աչքերին ակնոց, վիշն սպիտակ քաշնէ, որ մօտեցաւ ինձ եւ հարցրեց։

— Vous êtes Arménien? (Դուք Հա՞յ էք)

— Այո, — պատասխանեցի։

— Venez chez moi (Եկէք ինձ մօտ), — ասաց եւ հեռացաւ գնաց» (էջ 155)։

<sup>2</sup> Բերակն, 1898, Յուլիս, թ. 23, էջ 448։

<sup>3</sup> Մեյէի հայ աշակէրոններից են եղել նաև Մ. Ա. Գալիք-Բէկը, Կ. Բասմաջեամը, Դիւլեանը, Մեսրոպ Վրդ, Մահմատեանցը, Ճալախանցը, Միքամեանցը և ուրիշներ։



ՀՐԱԶԵԱՅ ԱՇԱԽԵԱՆ

Հ. Աճառեանը գպրոցի գրնապանից իմանում է, որ իրեն տուն հրա-  
ւիրող մարդը Մեյէն է, եւ գրում է. «Ոչ մի անգամ չէի լսած այդ մարդու ա-  
նումը, որ այսուհետեւ իմ ամբողջ կեանքի ուղեցոյցը պիտի լինէր»:

Մեյէն իր տանը շարաթը մէկ անգամ Հ. Աճառեանի հետ պարապում  
է հայերէնի հնչինաբանութիւն, իսկ համալսարանում՝ սանսկրիտ, հնդկրո-  
պական լեզուների համեմատական հնչինաբանութիւն:

Ուսանողութեան տարիներին Հ. Աճառեանը Փարիզի Լեզուարանական  
ընկերութեան անդամ է ընդունուել Մեյէի նորհիւ, իր մի ուսումնասիրու-  
թեան համար: Ահա ինչպէս. «Մեյէի հետ տանը ես ունեցայ ուրիշ պարապ-  
մունք էլ. լաղերէնի քերականութիւնը եւ բառարանը, որ պատրաստել էի Կոս-  
տանդնուպոտում, ցոյց տուի նրան. շատ ուրախացաւ և առաջարկեց, որ նոյ-  
նը Փրանսերէնի թարգմանեմ: Մաս առ մաս թարգմանեցի, ինքն էլ հետեւում  
էր լեզուին, ուղղումներ էր կատարում եւ վերջապէս ամբողջ դիրքը, «Եսծե  
սր լա լանգու լազ» վերնագրով, ներկայացրեց Փարիզի Լեզուարանական ընկե-  
րութեան, որ հրատարակեց իր Տեղեկադրում մաս առ մաս եւ յետոյ առանձին  
գրքով: Ինձ էլ այդ արթիւ նոյն ընկերութեան անդամ ընտրեցին» (էջ 157—  
158): Այդ լինում է 1897 թուին:

Հ. Աճառեանը եղել է միջակ արհեստաւորի գաւակ: «Կեանիխ յուշե-  
րից» գրքի «Դժբախտ շըջան» գլխում նա վերյիշել է, նրա մտերիմներից մենք  
լսեցինք երեւանում, ինչպէս նաև Մեյէն նրա աշխատութիւնների մի քանի  
գրախօսականներում նշել է, թէ Փարիզում նիւթական ինչպիսի՞ գրկանձների  
զնով է ստացել բարձրագոյն կրթութիւն. «Արտակարդ արիութիւն պահանջող  
աշխատանքային պայմաններում է սովորել» (Մեյէ) լեզուարանութիւն, իւ-  
րացրել լեզուարանական գիտական մեթոս: «Ասած լինելով —գրում է Հ. Ա-  
ճառեանը իր յուշերում—, թէ Ամերիկայում բանուրական ուժի կարիք կայ  
եւ շատ Հայեր այսուեկ գործ են զանում, որուցի Ամերիկա զնալ: Այս միտքս  
յայտնեցի Մեյէն, որ խոստացաւ տալ ինձ մի յանձնարարական Ամերիկացի  
մի իրաւագէտի: Բայց շուտով ես Ամերիկա զնալու մտքից հրաժարուեցի, ա-  
սելով, թէ այսուեկ աշխատողը այսուեկ էլ կարող է աշխատել («Կեանիխ յու-  
շերից», էջ 163): Անզ Աճառեանը խորոշած պիտակ է զամանել զիշերները  
եւ զաստակել եօթ Փրանք: «Յաջորդ օրը զանցի Մեյէի մօտ, դասի օրն էր:  
Պատմեցի եղածը: Նս միայն կարող եմ իհանալ մեր վրայ— ասաց նա: Այդ էլ  
ինձ համար քաջալերութիւն էր» (Նոյն տեղում, էջ 167):

Հ. Աճառեանի ուսանողութեան գժուարին տարիներին նրա եւ Մեյէի  
միջեւ հաստատուել է սերտ բարեկամութիւն, ինչպէս վկայում է Հ. Ներսէս  
Ակինեանը. «Աճառեան միակ բարեկամ մ'ունեցաւ այդ տարիներուն յանձին իր  
ուսուցչապէտին... որ շուտով ճանչցաւ քսանածեայ երիտասարդին կարողու-  
թիւնները, առաւ իր առաջնորդութեան տակ, միանգամայն կնքեց անոր հետ  
սերտ բարեկամութիւն»<sup>4</sup>: Դա իրօք եղել է չերմ, անշահամենդիր եւ յարատեւ

<sup>4</sup> Հանդէս Աժարեայ, 1953, էջ 453, Հրաչեայ Աճառեան (մահախօսական): Այն  
հարցին, թէ Մեյէն ինչո՞ւ այդ դժուարի տարիներին միւրափէս չի օգնել իր սիրելի աշակեր-  
տին, կարելի է պատասխանել մի այլ հարցով. արդեօք աշակերտը երբեւիցէ կ'ընդունէ՞ր այդ  
միւրափան օգնութիւնը. ո՞չ, կը պատասխանեն անձաւու նրա մտերիմները: Պատմում նե,  
որ Արևելագանձների 13րդ համազումարին (Փարիզ, 1897) մասնակցելու իրաւումնէ տաւազ  
դրամական փաքրիկ գումարը մեռ բերելու համար Հ. Աճառեանը նախըմտնել է իր ամկազմիք  
վահանել հենց այդ գումարը, առ Մեյէից կամ մէկ արթշից պարտ անել: Իրականութիւն  
է, որ Հ. Աճառեանը մասմակցել է այդ համագումարին. սակայն պատմում են մաեւ, որ ազ-

բարեկամութիւն, որովհետեւ պատրիարք, թշուն ծրագիւն է և ա ի  
թիւններից, ուշագրք հանձնել է իր արքունուր պատրիարք կը ի և ա ոք  
զարդարանք, հանունցիւ է նրա յու ս բնաւոր աշխատ թահան թահան ին և ա  
պահան մամուլութ ներփայացրէ զրոյ արքունիքները, իր այ ն արք չնե  
յու նպատակն իր տե տեղեր նշան ունեցած բնաւոր բնաւոր ուն և ա ա  
Մեյլի աշակերտ է ֆենս իր, և ա բնաւոր Վ և Բ ը և ա  
է, որ Մեյլի աշակերտներն ընդուներաքն կը ի և առ մի շնորհ մի և  
ների, առքի կոչման և առքի կոչման պատրիարքներ, և ա ա եւ ի  
յացեում էն յազուարանակն պատրիարքան պատրիարքներ, որու վրա Մէ  
յէն սեւենել է իր խորպիներն անցեցք, բարեկամ գուման կախան սկզբ և  
ընդդրիլ ամրողական ուսումնականիքների մէջ, Մեյլի մահապահ մըր  
ժերից է եղել տաղածածեր յայտնարկելու, իրավ պայման ուսումն և  
յու արտեսուր, տաղած սպայէն երանց պարտապարէն իր տեսակետները, Մէ<sup>1</sup>  
ըն աստիճանի յարցելու իր աշակերտների անշատափան սպիտուն ու իրեն  
բանութիւններ, մէսու պատուի երանցից յատպոյնն ու արքայուուր չուր կ ը  
զեւ զիտութեան համար ։ Խնչակն ամէն մի ուսուցիչ, նա եւս ունենալ է իր ա  
մձնասիրիյներին, նրանցից է եղել Հ և Համատեսէր ։ Այդ ժուրին էն վիրուն  
Մեյլի բարձր համարումն ու զանանականն իր այտներարք, որպէս զիտու  
կանի և անխոնջ համապոսոց, ինչպէս հուս պատասխանից պարասականները  
նրա աշխատանիքների ժամին ։ Մէր երկու զիտուկանիների բացատկաց թիզ  
թակցութիւնն է յու մաս պապացուն ։

Փարիզում Մեյլին աշակերտնուու է Միրուպուրիում Հիւպյանի  
զասախօսութիւնները ունենացրիս յիշուարանական կայսուն զիտուկանիքներ բա  
տանալուց, գլուխարանական մեթոսներին խորմանի լինելուց յիտոյ պիտի  
Ահատեանի զրի է Մեյլին, մերազանում է Հայաստան և հունակով զրաց  
ուում այն ամէնի զարգացմանը, որ մերարիրում է իր ապային յիշուի պատ  
ժութեանք։ Նա զուում է կիմբանին, յիտոյ Շուշի և Պարսկաստան ու ան  
բոցչութիւններին պատ մանկագրամական զրդունակութեան ։ Նրա մերով  
անցած չի անցել մնայ շքեց Փարիզում և զանայ քայլային կամ մշտիւ  
թային ոորդիչ, ինչպէս այն ժամանակ արեցին ունեն կորուր այց կը ։

Տաս հազարեալ պատաստ նրա բոյ չեն տուեն մանեւ Աթանաք զայշին ։ Եր պիկույնն  
ըզբեր տոյց տալով զամապաթի, նա սպիտու է եղել ասէ թ նիմ Մեյլի բարձրուուրը  
և ա պիտ է այդ բարեկամ յանձնել նրա վերապատ յարցուուն է նրա մանեւ կըր պապա  
րարուուն է զենցուց Հ Ահատեանի ամսունը, պարուն միրուն է ահատեանի Ահատեանը զա  
յացերուած լարին ։ Իրու, նա զենց սպայալ է յու զիտուկան շրջանակները Միայի Թէ  
յէ ե, որ իր բար հայեցակ ու ահատեան մեզ ապիտ բարյերա է Արա գասան ին  
Շնորհ Օրս ուներին ։ Ակրամ Օրս անյէն զազաւուն է ահատեան սպայալ նեստեան երա  
չուն է ասէի ինենական, պատեսան ասուն են նու յարուակ կը գրայ է կինարանաց  
զուն է իրի ուսուցի ուշացրին և նոյն բարանը նոյն հերան պատաստ է ահատ  
եան եան եա թուզու և անփառարքի նեներ ուսութ այնու յայց է յին եղել նուսպան  
զիտուկան զեկուցուներ համար Այսու է ու նուսպան նոյն Անդաշ և Երայ, ան  
նու նուսպեան նրա վեհացն անան նունուան է Արա նու վարժանակ են ու երա  
վերա Միրանարքի իր զամանակ բիւներ յայց Պատասխան են թ այս պատե  
որտն յազուուն պիտ է յանը Մեյլի և իր արքուն զիտուկան ա/ակերտ նուսպան Կանան  
զա զա արքանութեաներ և արքանութեան նուսպան ուն ունչուն է ու ա/ակերտ պատե  
սպան եր իր ուսուցին ։

5. Տառակ Անգլիա, 2002 էջ 548

**ՄԵՅԻՆ՝ Հ. ԱՃԱՌԵԱՆԻ ԲԱՐԵԿԱՄԸ  
ՆՐԱՆՑ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ**

Հ. Աճառեանը թէեւ հեռացել է Փարբկից, սակայն 35 տարի նամակագրականն սերտ կապ է պահպանել իր ուսուցչի հետ, որ միշտ էլ մնացել է իր շըջանաւարտ աշակերտի՝ Հայազիստութեան համակողմանի ուսումնասիրութեան նույրուած Հ. Աճառեանի ուսուցչին ու բարեկամը, խորհրդատուն՝ զիտական, երբեմն էլ նոյնիսկ զործնական հարցերում։ Այսպէս, իր «Հայ բարբառագիտութիւն (Ուրուագիծ և դասակարգութիւն հայ բարբառների)» աշխատութեան հայերէն հրատարակութեան հարցով, Հ. Աճառեանը Գր. Խաւաթեանցին զրել է. «Գրքիս գերհազիրը պէտք է զնինք Հայ բարբառագիտութիւն (Ուրուագիծ եւ դասակարգութիւն հայ բարբառների)։ Ուրուագիծ բար անհրաժեշտ է ՄԵՅԻ խորհրդով, որպէսզի Փրանսերէն զրքիս հրատարակիչը իրաւունք չունենայ զրքիս վրայ պահանջներ ներկայացնելու իրեւ թարգմանութեան»<sup>7</sup>։

Առաւելապէս զործնական եւ օգտակար Էն եղել ՄԵՅԻ խորհուրդները յեզուարանութեան ընալուառում։ Խնչպէս ասուեց Երդ ծանօթութեան մէջ, Հ. Աճառեանը ՄԵՅԻ համակները չել պահել, բայց դրանցում քննարկուած հարցերը օգտագործել է, գրանց քննագատական կողմր նկատի առել իր ուսումնասիրութիւնների մէջ։ Դրա օրինակները շատ են։ Նշնք մի քանիսը։

«Քննութիւն Սուչավայի բարբառին» ուսումնասիրութեան առաջարանում Հ. Աճառեանը զրել է. «...Երախտեօք կը յիշեմ ... իմ մեծանուն ուսուցչիներու պրոֆ. ՄԵՅԻ եւ պրոֆ. Հետզշմանի քաջական խօսքիրը ... Այս հատորիս մէջ ջանացած եմ զարմանել նախորդ աշխատութեան (և Ալանի բների բարբառին քննութիւնը) — Մ. Մ.» ընդհանուր ուղղութեան մասին այն թերութիւնները, որոնց համար զիտողութիւններ եղան ինձ։ Ուսուցչու պըն. ՄԵՅԻ նախ բերանացի եւ ապա գրաւոր կերպով կը քննագատէր, թէ համեմատութեան նոր առնուած էր առհասարակ մեր արդի հայերէնը... Երկրորդ՝ ձեյնական օրէնքի հանդէս զրուած օրինակներու նույազութիւնը... մանաւանդ երկրորդական օրէնքներու համար պէն. ՄԵՅԻ կը պահանջէր, որ օրինակներն ամբողջական րլան... իմ ներկայ հատորիս մէջ ամբողջ այս թերութիւնները վերցած են»<sup>8</sup>։

Մի այլ օրինակ։

«Քննութիւն և համեմատութիւն նզնկայ նորագիւտ ձեռագրին» ուսումնասիրութեան մէջ խօսելով ձեռագրի պահստամբ ընթերցման մասին եւ պատճառաբանելով, թէ այն հարազատ է զ արքին՝ Հ. Աճառեանը տողատակում նշել է. «Վերոյիշեալ դիտողութիւնները քաղուած եւ ընդարձակուած են ՄԵՅԻ հայագէտին մէկ անձնական նամակին, որուն հաղորդած էի ժամանակին ձեռագրին այն գեղեցիկ բնթերցուածքը»<sup>9</sup>։

Կամ. «Հայոց զրերը» (առաջն հրատարակութիւն, էջ 322—323),

6 Հ. Աճառեանը Երեւանում վասել է ՄԵՅԻց ստացած նամակները։

7 Երեւան, ՀՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Գրականութեան և Արևեստի Թանգարան, Գր. Խալարեանցի Փանդ. 1911 թուականի Մայիսի 12ի նամակից։ Նոյն միտքը կըրենաւծ է Ա. Պ. Հոկեմերի 5ի նամակում։ Նշեմ, որ Հ. Աճառեանը, մինչ այդ, նայն աշխատութիւնն աւելի համառու հրատարակութիւնի է քրանչերէ։

8 Բագմազէս Ապ, 1899, էջ 112—113։

9 Հանդէս Ամօրեայ, 1904, էջ 162։

աշխատութեան մէջ հին հայերէնում վ և ւ հնչիւնների տարբերութեան մասին խօսելիս, Հ. Աճառեանը մէջքերել է Մեյէի մի նամակի հետեւալ տողերը. «Ահա թէ ինչ կը դրէ ինձ հայոց Մեյէ իր նամակին մէջ այս խնդրի առթիւ»՝ «Թարով վ եւ ւ գրերուն, ես համոցուած եմ, որ ասոնք իրարմէ տարբեր ձախներ էին, առանց որոյ այրուբենի հեղինակը զանոնք զանազանած չպիտի րլլար: Հակամէտ եմ կարծելու, որ վ կը նշանակէր խիստան բաղաձայն մը, թերեւս արգէն չըթնատամնային վ ձայնը. բայց այս վերջին կէտին վրայ ապահով չեմ. յամենամ գէպս անջուշ սպիրանտ էր, կրկնաշրթնային կամ չըթնատամնային. իսկ ւ աւելի բաղաձայն ու էր (1913 Դեկտ. 23):»

Իր մի նամակում (1911 թ.) Հ. Աճառեանը հաւանարար Մեյէի կարծիքն է հարցը ել նիկողայոս Մառի լեզուարանական տեսակէտների մասին: Մեյէն նրան պատասխանել է հետեւալ տողերով, որ Հ. Աճառեանը արտադրութիւով (Փրանսերէն լեզուով) հաղորդել է Դր. Խայտեանցին<sup>10</sup>. «Բայտ իս, պէտք է թողնել, որ Մառը մինչեւ վերջ շարադրի իր տեսակէտները, եւ ապա միայն ձեռնարկել դրանց քննարկմանը: Յարդ չեմ կարողացել դրանք յստակորէն ըմբռնել. անձեւ մի բան են: Բոլոր նրանք, որոնք մի քիչ լեզուարանութիւն գիտեն, տեսնում են, որ դրանցից ոչինչ չի կարելի եղորականնել: Սակայն երբ նա հերթականութեամբ կը շարադրի խնդիրները, կը տեսնենք, որ դրանք անհիմն են: Պէտք է մի քիչ էլ սպասել: Մէկ յօդուածը ոչինչ չի փոխի եւ կարող է պղտորել գեռեւս չկազմաւորուած մոռքերը»<sup>11</sup>: Հ. Աճառեանը շարունակում է. «Կ'աւելցնէ, թէ ինքը Մառի բոյոր գրքերը ունի.. Ամենէն վերջը կ'աւելցնէ. նա նորից կը մտածեմ ձեր համակին մասին: Այսպիսով՝ Մեյէ կը հրաժարի գրելէ. սակայն վերջի բառերը յուսալի են. կրնանք կարծել, թէ հանգիստ ժամանակ մը զբաղի այս խնդրով»<sup>12</sup>:

Սակայն Հ. Աճառեանի «Հայերէն արմատական բառարան» է, որ դարձել է Մեյէի եւ Հ. Աճառեանի նամակագրութեան գլխաւոր նիւթը, նա է արժանացել Մեյէի առանձին ուշագրութեան, գիտական աշակցութեան եւ հորիուրգներին: Նրանում ամենից ակնառու է երկու գիտնականների գիտական համագործակցութիւնը: Հիւպշմանից յետոյ հայերէնի հարուստ բառադանձի ուսումնասիրութեան գործում լեզուարանութիւնը շատ բան է պարտական Մեյէին եւ Հ. Աճառեանին. այստեղ երկու հսկայ հայագէտների ջանքերն ու յաջողութիւնները զուգընթաց են եղել: «Հայերէն արմատական բառարան»ի հեղինակը յայտարարել է առաջարանում, թէ որքա՞ն է պարտական իր ուսուցչին այս գործում, և ուսուցիչը մատուցում հրատարակել է, թէ որքա՞ն է հըպարտ իր աշակերտով: «Հպարտ եմ — գրել է Մեյէն—, որ Աճառեանին երկար տարիներ ունեցել եմ իմ աշակերտների թւում: նա մէկն է նրանցից, որոնք պատահ են բերում այն գործոցին, որից անցել են»<sup>13</sup>: Մեյէի աշակերտներից հայագէտ Հ. Լուի Մարիէսը գրել է. «Մտուզարանութեան մէջ եւս Մեյէի լրուով է առաջնորդուել Աճառեանը, որ յաճախ կրկնել է «Ռւդիդ մէկնեց Մեյ-

10 Գրահանութեան եւ Արուեստի քանզարան, Գր. Խալաքեանցի Փոնդ. Հ. Աճառեանի նամակը Գր. Խալաքեանցին (1 Մայիս 1911):

11 Մեյէի նամակի տողերի բարզմանութիւնը մերն է:

12 Ի գէպ նշենք, որ Մեյէն իր գրախօսականներում միշտ էլ խիստ է մննադատել Մառի լեզուարանական տեսականները, սակայն մեծ զովսուզ է խօսել վրաց և հայ բառարան վերաբերաց նրա երատարակութիւնների մասին:

13 Ա. Մեյէ, Գրախօսութիւնն «Հայերէն արմատական բառարան»ի մասին (Bulletin de la Société de linguistique de Paris, 1927, հատ. 27, էջ 51):

յէ» . Եւ եօթհատոր «Արմատական բառարանից՝ եօթթեւանի այդ կիկոպեան կոթողը կազուած է «Esquisse»—ին և «Altarmenisches Elementarbuch»—ին՝ երկթեւ այս կայանին, որից սնւում է ամբողջ հայագիտութիւնը : Ստուգա-բանութիւնը, փոխառութիւնների բնոյթը, բառերի մէջ իրենց հետքերը թողած զանազան բաղադրականութիւնները՝ այս բոլորը բառարանում ուսումնասիրուած է Մեյէի լեզուարանական և բանասիրական ըմբռումով, Մեյէի պատմական մեթոսով : Հայոց լեզուի եւ հայ ազգի համար ինչպիսի՞ բախտաւորութիւն է այդ երկու մտքերի չաղկապումը այս գործում : Մեյէին այնքան բարձր էր գնահատում այդ բառարանի նշանակութիւնը, որ կեանքի վերջին օրերին ձեռնամուկի է լինում դրա էական մասի Փրանսերէն լեզուով ամփոփման»<sup>14</sup> :

Սակայն Հ . Աճառեանի «Հայերէն արմատական բառարանի» եւ միւս աշխատութիւնների մասին Մեյէի գրախօսութիւնները ներկայացնելուց առաջ ցոյց տանք մի քանի բառով, որ Մարիէսը չի չափազանցել եւ Հ . Աճառեանին չի թերագնահատել, քանի որ Աճառեանն ինըը հայրտութեամբ է նշել, թէ առաջնորդուել է Մեյէի լոյսով :

«Հայերէն արմատական բառարանից յայտնի է (խմորատիպ առաջին հայտարակութիւն, հատ. է<sup>15</sup>) , որ հեղինակը երկար տարի ներ է աշխատել այս հոյակապ գործի վրայ : 1926 թ . բառարանի առաջին պըրակների մասին հայտարակած գրախօսութեան մէջ, Մեյէն գրել է . «Լեզուարանութիւնը սովորելու համար Փարիզ զալուց եւ արտակարգ արիութիւն պահանջող աշխատանքային պայմաններում լեզուարանական մեթոս իւրացնելուց յետոյ, պրն . Աճառեանը շդադարեց հայերէնի բառազանձը ուսումնասիրելուց : Երկար ժամանակ նրան թափառական են դրամերէ հայ ազգի գերաեատութիւնները, սակայն յաճախ վշտայի իր կեանքի պայմաններում երբեք աշքաթող չի արել իր ժամադրութիւնը»<sup>16</sup> : Բառարանի կազմութեան ընթացքի մասին միշտ էլ տեղեակ է պահել Մեյէին : Դեռեւս 1914 թ . Փետրուարի 9ի նամակում Մեյէն Մ . Վրդ . Մաքսուտեանցին գրել է . «Ընչպէս երեւում է, Աճառեանը բուռն թափով է աշխատում իր [Արմատական] բառարանի վրայ»<sup>17</sup> : Նոյն թուականի Ապրիլի 14ին՝ «Ըստ երեւոյթին, Աճառեանը բառարանի գործը առաջ է տանում . ձեռագիրն արդէն պատրաստ է մինչեւ Դ տառը ներառեալ : Այս ստուգաբանական բառարանը շատ օդտակար գիրք է լինելու» :

Հ . Աճառեանի հայերէնի արմատական կամ ստուգաբանական բառարան կազմելիս չէր կարկէ, ի հարկէ, բառարարուել լոկ աշխատանքի ընթացքի մասին տեղեակ պահելով իր ստուցչին, որ հնդեւրոպական լեզուարանութեան մեծաղոյն հեղինակութիւններից էր, պատրաստել էր լատիներէնի արմատական բառարանը, ստուգաբանել եւ ստուգաբանում էր հայերէն տասնեակ բառեր : Ուստի նրա հայերէն ստուգաբանութիւնները բառարանի մէջ ընդգրկելուց բացի, Հ . Աճառեանն թղթակցութեամբ յաճախ գիմել է նրա օգնութեանը եւ կարծիքին . «Հետպէմանի մահից յետոյ — գրել է նա — . հայ լեզուարանութեան մեծաղոյն հեղինակութիւնը եղաւ Meillet, լեզուարանութեան ուսուցի-

<sup>14</sup> Une cérémonie à la mémoire du Prof. A. Meillet, 1937, Փարիզ, էջ 48 :

<sup>15</sup> Երևանի Գևորգական համալսարանի Հայագիտական կենտրոնը վերահսկակարգութէ է «Հայերէն արմատական բառարան»ը . արդէն լոյս է տեսել առաջին հատորը, որը ընդգրեկուած է նախկին հօքերըրդը :

<sup>16</sup> Revue des Etudes Arménianes, հատ. 6, 1926, էջ 333 :

<sup>17</sup> Երևան, Մատենադարան, Մ . Վրդ . Մաքսուտեանցի փանի :

չըս, որ եւ այսօր (1935 թ. - Մ. Մ.) ընդհանուր լեղուարանութեան համաշխարհային հեղինակ է: 35 տարիների թղթակցութեամբ բազմատեսակ ցուց ցումներ եմ ստացել իրանից, իր միջոցով ճշտել բազմաթիւ ստուգարանութիւններ, ստացել իր հաւանութիւնը կամ մերժումը, որ և յաճախ յիշատակում եմ բառարանիս մէջ»<sup>18</sup>: Եւ իրօք, շատ բառերի ստուգարանութեան վերջում բառարանում կարդում ենք, որ տեղեկութիւնը Մեյէի անձնական մի նամակից է:

«Հայերէն արմատական բառարան»ում ամէն մի բառի մասին խօսում է հինգ բաժնում՝ Բառագիտութիւն, Ստուգարանութիւն, Ստուգարանութիւնների պատմութիւն, Գաւառակառ եւեր եւ հայերէնից փոխառեալ բառեր: Համարեա այս բոլոր բաժններում, «Հեղինակի իսկ խստովանութեամբ առկայ է Մեյէի (եւ Հիւազմանի, ի հարկէ) առաջնորդող միտքը, նրա «Լատիներէն» ստուգարանական բառարանից նմուշը: Այսպէս.

«Բառագիտութիւն» բաժնում.

Հանգուցեալ Հ. Ն. Ակինեանը «Հայերէն արմատական բառարանօք դրախօսութեան մէջ» (Համիդէս Ամսօրեայ, 1930, էջ 486) քննադատել է հեղինակին նրա համար, «որ ընդդրկել է «անլուր, բարբարոս, ատակուսական, անսովոր, հազուազիւտ եւ փոխառեալ բառեր»: Բառարանի առաջարանում (Հատ. Ա., էջ 11) հեղինակը նրան պատասխանելիս վկայակոչել է իրուրի եւ Մեյէի «Լատիներէն ստուգարանական բառարան»ը, «որի «մէջ էլ արդպիսի անսաոյդ եւ անսովոր բառերը յիշուած են իրենց հերթին առանց խարութեան. օր. էջ 863, տեսա: մեկնական բառ, առանց բացարութեան, չստուգարանուած: Եւ այս գրողն է Մեյէ, զգո՞յշ եւ բժախնդիր զիտնական»:

«Ստուգարանութիւն» բաժնում.

Վերեւում մէջ բերեցինք Հ. Աճառեանի վկայութիւնը, թէ 35 տարիների թղթակցութեամբ նա Մեյէի միջոցով ճշտել է բազմաթիւ ստուգարանութիւններ (Հատ. Ա., էջ 15): Բառարանի առաջարանում հեղինակը համեստաբար գրել է, թէ հայացէտ լեցուարանների (Հիւազման, Մեյէ, Լիտեն, Փետրսեն... ) առաջարկած ստուգարանութիւններից բացի ինքն էլ ունի հրատարակուած կամ անտիպ բազմաթիւ ստուգարանութիւններ, որոնք ընդդրկուած են բառարանում. սակայն նա ստոյդ է համարել միայն այն մեկնութիւնները, որոնք արժանացել են Հիւազմանի եւ Մեյէի հաւանութեան:

«Ստուգարանութիւնց պատմութիւն, երբեմն նաև ուղիղ ստուգարանութեանց համար — զգել է Հ. Աճառեանը», օգտուած եմ նաեւ անտիպ գործերից: Գարագաւեակի, Ա. Ալյաստերեանի, Մեյէի, Հիւազմանի եւ ուրիշների հետ ունեցած անձնական ծանօթութիւնն և թղթակցութիւնները շատ արդիւնք են տուած: Յատկապէս, ինչպէս վերը յիշեցի, իմ ուսուցիչ Մեյէի հետ ունեցած թղթակցութիւնն 1898 թուից սկսեալ մինչեւ այժմ անընդհատ, շատ արդիւնաւէտ է եղած» («Հայերէն արմատական բառարան», Հատ. Ա., էջ 20): Նկատենք, որ Մեյէն յիշատակում է առանձնապէս:

Ի գէպ ասենք, որ ստուգարանութեան եւ ընդհանրապէս հայագիտութեան վերաբերող հարցերով Մեյէին դիմել են նաեւ ուրիշ Հայ գիտնական:

<sup>18</sup> «Հայերէն արմատական բառարան» հատ. Ա., էջ 15: Ի միջի այլոց հշեմիք, որ բառարանի սկզբում հեղինակը իր աւսուցիչների նկարների շարքում դասել է նաև Մեյէի թմբ՝ «Նուիրում եմ ձօնալ եւ «Երախտապարտ տաճ»: Հ. Աճառեանը ստուգարանութեամբ:

Բառարանի նոր երախտակալընամ մէջ չկայ այս էշը:

ներ՝ Կ. Բասմաջեանը օտար լեզուների բառերի հայերէն տառադարձութեան<sup>19</sup>, Մ. Արեգեանը հայերէնի ուղղագրութեան բարեփոխման<sup>20</sup>, Խ. Յովկաննիստեանցը, Լ. Մակրեանցը, Գ. Տէր Մկրտչեանը (Միարան), Մ. Վ. Մաքուտեանցը, Ա. Զապանեանը եւ ուրիշներ՝ հայացիտական զանազան խնդիրներով։ Մեյէից ստացուած պատոսիանները մասմբ պահում են երեւանի դիւաներում<sup>21</sup>։ Հայ եւ օտար հայագէտներ վստահութեամբ են գիմել Մեյէի ուսումնասիրութիւններին կամ անհասկս նրան, որովհետեւ, ինչպէս զրել է Հ. Փետրսոնը, «Հիւպշմանի գործերից յետոյ Մեյէի աշխատութիւնները հայ յեղուարանական որեւէ ուսումնասիրութեան ամենից անհրաժեշտ մեկնակէտն են»<sup>22</sup>։

### ՄԵՅԷՆ Հ. ԱՃԱՌԵԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Հետեւեալ տողերը ասում են այն մասին, թէ ինքը՝ Աճառեանը, գեռեւ 1898 թ. ինչպիսի՞ համարում է ուսեցել Մեյէի, որպէս հայերէնի զանախօսի եւ հայագէտի մասին։ «Հայ լեզուի ուսուցման եղանակը յիմուսուս» յօդուածում Օկիւսթ Քարիէրի հայերէնի դասաւանդման եղանակը ընութաղրելուց յետոյ, Հ. Աճառեանը Մեյէի մասին գրել է. «Հայացիտութիւնը սակայն աւելի լուրջ, ծանրախոն և հմուտ ներկայացուցիչ մ'ունի յանձին պրն. Մեյէի։ Սա մի երեսնամեայ նիհար (ինչպէս կ'ըլլան բոլոր աշխատաւոր զիտնականները), սրամիտ, լուրջ, եւ թեթեւաշարժ երիտասարդ մ'է։ Դեռ երեսնամեայ, բայց արդէն ստացած է Վարդապետութեան աստիճանը, որ այնպէս դժուար է Փարիզի մէջ։ Լեզուարան, նուիրուած միայն լեզուարանութեան, հմուտ է հնդեւրոպական բոլոր մայր լեզուաց և այս իսկ նպատակու ուսուած է նաեւ հայերէնը, զոր կատարելազործելու համար անցած էր Կովկաս, ուր ժամանակ մը հայերէն խօսած է։ Տեսած է իշմիածին, Աշտարակ, բարձրացած է Արագած լեռը եւ այլն։ Մանօթ է մեր աշխարհիկ գրական բարրառներուն եւ կը կարգայ հայերէն թերթ եւ ուրիշ լեզուարանական աշխատութիւններ։ Աւսուցիչ Բարձր ուսմանց վարժարանն մէջ, ուր կը գառախոսէ համեմատական քերականութիւն, լիթուաններէն, սլաւերէն, զանկերէն. իսկ այս վերջին տա-

19 Շամակի հայերէնի տառադարձութեան մասին, Բահասէր, 1902, Դ, էջ 253-50։

20 Մեյէի անձնական նամակ, երեսնի Գատմական արխիվ ու Գրականութեան եւ Արևելի բանագրան, Մանուկ Արքեստը փաթ։

21 Մեյէրենի մը հասուած միաց Ստեփան Կամայեանցի նամակը, որ աւղուած է այն ժամանակ (1911 թ.) Փարիզում Մեյէի ուսուած Մերոս Գ. Մահմատեանցիմ. «Համար ու անդուս եւ Զեզանց» Մեյէից իմանաւ, թէ ուսուած միայն զգաւոր է համակարգ եւ զիրաւոր սահմաններով։ թէ եւ այլ բան. այլու այդ բառը որեւէ կապ ունի՞ մեր առող կերեն ուսու բառի հետ։ Արդեօն նա կարող է որեւէ բացառութիւն տալ մեր զիր եւ զաւառ բառերին։ Բաստակը ասորերէ՞ն է. թէ պարկերէնց փախ անմաւած. (նամակի լուսանցքում «Ո՞ր մեն է աւելի նիշ» Բաստակ թէ՞ Բաւատակ)։ Բացի այդ, նաւակառիկ համակարգ է մասնաւութեան մասին մասնաւութեան մասին, ու անդուն հազարդեցէ՞...պ. Մեյէին շնորհակալիք իւրաքանչ իւր մասաւութեան մասին (Ազատամեծութեան մասաւութեան մասին, որ զրել է Մեյէի — Մ. Մ.] եւ ուղարկածի մայու մնացառականի առանձանականի — Մ. Մ.] համար (Ծրեւան, Մատենագրան, Մ. Վ. Մաքուտանացի փոխ, համակ 28 Մարտ 1911)։

22 H. Pedersen. Les pronoms démonstratifs de l'ancien arménien, Գաֆիթնակըն, 1906, առանձանատիպ, էջ 20։

բին աւելցուց նաեւ հայերէն... ՄԵԼՏ Ֆերանսայի միակ հայտէտն է թիւով եւ արժանիքով...»<sup>23</sup>:

Նոյն 1898 թ. Հ. Աճառեանը Փարիզից գրել է Լեւոն Մաերեանցին. «...ՄԵԼՏ հայերէն պէտք եղածին պէս սորված է եւ կարող է կարգալ որեւից հայերէն աշխատովթին: Զարմանալի կը լինի, որ երապացի հայուղտ մը հայդէտ անունն կրէ եւ հայերէն չղիտնայ: Այսպէս օրինակ, ես զարմանում եմ, որ Հիւաշման զանդատ է յայտնում, որ հայադիտութեան վրայ հայերը ուռսերէն կամ հայերէն կը գրեն, այս գրքերը կորուած են մեզ համար կըսէ: Ի զոր խօսք: Երեք տարուան մէջ մի օր չլսեցի ՄԵԼՏից այսպիսի գանգատ մը: Իս կարծուամ եմ, թէ հայագէտները պարտաւոր են հայերէն սորվիլ»<sup>24</sup>:

Այժմ տեսնենք, թէ ՄԵԼՏ'ն ինչպիսի զրուատանքով է արտայայտուել Հ. Աճառեանի, որպէս հայագէտի եւ անխոնջ հետազոտողի մասին, ինչպէ՞ս է դնահատել նրա աշխատովթինները:

### Հ. ԱՃԱՌԵԱՆԸ ՄԵԼՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՄՐԻ

Վերեւում ասացինք, որ Հ. Աճառեանը գիտական հարցերի լուծման համար նամակներով դիմել է ՄԵԼՏին: Վերջինս փոխադարձարար վսուահելով իր գիտանկան աշխարտին՝ հայուղիտական տեղեկութիւններ է խնդրել նրանից: Սակայն սուածած պատասխանը իր ուսումնասիրութեան մէջ իրբեւ փաստ օդատագործելիք երբեք չի թերացել նշել, թէ այդ տեղեկութիւնը իրեն հաղորդող Հ. Աճառեանն է: Բերենք դրա օրինակներց:

Հին հայերէնում տեղաւթիւն բառի ուղղագրութեան մասին խօսելին, ՄԵԼՏ գրել է, թէ զրութեան ճիշտ ձեւը պէտք է լինէր տերութիւն՝ ե—ով, եւ այդ հաստատելու համար, բացի իր փաստերից, վկայակուել է Հ. Աճառեանի անձնական հաղորդումը. «Եւ իրօք, մի հաղորդման համաձայն, որ պարտական ենք պին. Աճառեանի սիրալիք պատրաստակամութեան, այս բառը, որ մէկ անդամ է հանդիպում Աւետարանում (Ղուկ., Գ, 1), զրուած է ե—ով և ոչ թէ ե—ով, այսինքն՝ տերութեանն»: Այսուհետեւ նշուել են իջմաննի նախկին Մատենագարանի այն ձեռագրերը, որ ՄԵԼՏի ցուցումով Հ. Աճառեանը ընթերցել է այս իմերի պարզաբանման համար: ՄԵԼՏ աւելացրել է. «Թըն. Աճառեանը ենթաղործ է նաեւ, թէ 1295 թ. մի ձեռագրում կարելի է կարգալ նորմայն տերութիւն. սակայն ձեռագրի գրչութեան եւ—եւ այնքան են նման, որ պին. Աճառեանը ոչինչ չի անդում»<sup>25</sup>:

Մի այլ գէպօւմ, Հ. Աճառեանի նամակով իր գիտողաթիւնն է յայտնել ՄԵԼՏ հրապարակած մի կարծիքի վերաբերալ: Վերջինս օգոստուելով գրուանից՝ իր յօդուածին ուղղում է աւելացրել, յայտնելով ճշցողի անունը: Այսպէս. հայերէն ջրէք բառը ստուգաբաննելուց որոշ ժամանակ անց՝ ՄԵԼՏ գրել է. «Այս Մետուր ուում [Փարիզի Լեզուարանական ընկերութեան տեղեկագրում — Մ. Մ.], Հա. 18, էջ 62, ես խօսել եմ հայերէն ինչ—որ \*ցուք «առաստաղ» բառի մասին: Պըն. Աճառեանը ինձ նկատել է տալիս, թէ այս ուղղականը լոկ ենթագրուել է Աւետարանում հանդիպող յոգնակի սեռականի

23 Բազմագէպ, 1898, Յուլիս, էջ 320:

24 Քրակ. եւ Արուեստի քանգարան, Հ. Մաերեանցի Փոմէ:

25 «Etymologies arménientes» («Հայերէն ստուգաբանութիւններ»), Mémoires de la Société de Linguistique de Paris, համ. 11, 1900, էջ 400:

ցուց ձեմ գոյութիւնից, թէ այս ճիշտ չէ և մի ձեռագրում յայտնաբերուած ուղղականի խսկական ձեւն արդէն կայ Վենետիկի Առևտն քառարանում»<sup>26</sup>:

Հայերէն յηի բառը ստուգաբանելուց առաջ Մեյէն նամակով տեղեկացէլ է Հ. Աճառեանից, թէ ինչպիսի՞ ստուգաբանութիւններ են առաջարկը ւած այս բառի համար: Եւ ըստ այնմ Մեյէն գրել է<sup>27</sup>: «Այս բառը չկայ պրի. Աճառեանի Արմատական մեծ բառականի լոյս տեսած մասում: Իմ հարցումիս, պրի. Աճառեանը յիշատակում է միայն երկու համեմատութիւն...»<sup>28</sup>

«Անանքի յաշերից» գրքում (էջ 276) Հ. Աճառեանը պատմում է, թէ Շուշիում Մեյէն նրան կարգալ է տալիս իր կազմած «Դասական հայերէնի համեմատական քերականութեան ուրուակիծ»՝ «*Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique*», «Մեյէն կազմել էր իր հայերէնի քերականութիւնը եւ ուղում էր, որ ձեռագիրը միասին կարգայինք նախքան տպագրելը, որպէսզի եթէ պատահական սխալներ սպրդած լինէին, ուղղէինք: Այս աշխատանքը կատարեցինք»:

Մեծ նշանակութիւն տալով Հ. Աճառեանի կարծիքին՝ Մեյէն անտարակոյս խնդրել է նրանից, որ գրափոսութիւն զրի իր “Եսզիսե...”—ի մասին, երբ լոյս է տեսել 1902ին: Աճառեանը պատասխանել է. «...Ինչ վերաբերում է գրափոսութեան, թերեւս այն հրատարակեմ «Մուրնատար դիտէք, որ սա հայերէն պարբերակեններից լաւագոյնը եւ այժմ մամենատարածուածն է. այդպիսով գրափոսականը դրանում աւելի շատ կը տարածուի, քան այլուր»<sup>29</sup>:

Հ. Աճառեանի նկատմամբ Մեյէի ունեցած վստահութեան, նրա գիտական կարծիքին վստահելու մի այլ օրինակ. Մեսրոպ Վրդ. Մաքոստեանցին գրած մի նամակից (Մարտի 26, 1912 թ.) տեղեկանում ենք, որ Մեյէն գրամարի իր կազմած գերմաներէն քերականութեան սրբագրական մամուների ուղարկել է Հ. Աճառեանին՝ ստուգման համար. «Մի իրեկի Մաքոստեանց —գրի է նա—, վերջապահ ստացայ Աճառեանի սրբագրած փորձնական էջիրը: Ի միջի այլոց, նա ձեզանից աւելի վրիպակներ չի յայտնաբերել»: Մեյէի մէկ ուրիշ նամակուց (22 նոյ. 1912) կարելի է եղբակացնել, որ նա Աճառեանի կարծիքն է խնդրել նաեւ նոյն աշխատութեան բառացանիկ մասին. «Աճառեանի ընդունած այրենական հերթականութիւնը հնարաւոր է հնչիմական փոխառութեան տեսակէտից»: Ի դէպ, բառացանկը կազմել է Մաքոստեանցը:

Մեյէն հիմքեր ունէր, անկասկած, հայագիտական առանձին հարցերում դիմելու Հ. Աճառեանին, իրեւ հեղինակաւոր, խոտապահանջ և իր ուսուցչի պէս զգովից հայագէտի խորհուրդներին, գիտական տեղեկութիւններին ու կարծիքին: Դեռևս 1902 թուականի Հոկտ. 14ին Արշակ Զօսպանեանին գրած մի նամակում Մեյէն իր աշակերտին որպէս ժամանակի «հայ լեզուաբանութիւն» լաւագոյնը». «Ես այդ յօդուածը գրեցի, որպէսզի նշեմ այն, ինչ որ ուղում էր Աճառեանը՝ իմ եւ որակեալ մասնագէտների կարծիքով հայ լեզուաբաններից լաւագոյնը»<sup>30</sup>: Կ. Բամաջնանի «Հայոց արդի պատմութիւն»

26 Mémoires de la société de linguistique de Paris, XVIII, 1913, 377.

27 Revue des Etudes arméniennes, X, 1930, 184.

28 Հ. Աճառեանի նամակի լրիւ քարգմանութիւնը տրուած է սոյն մենագրութեան վեքում:

29 Նկատենք, որ Հ. Աճառեանի «մատնեախօսականը» «Եսզիսո...»—ի մասին լոյս է տեսել Հանդէս Ամսորեալում, իսկ Մուրնատար կամաց եւ մի այլ գրափոսութիւն, որ Աճառեանը ուղարկել է Մեյէին:

30 Դրականութեան և Արևեսոր քանգարան, Ա. Զօսպանակի Փոնդ:

(1375—1916)» աշխատութեան գրախօսականում Մեյէն իրոք թերութիւն նշել է հետեւեալը. «Յաճախ պարզ անուանացանկեր ենք գտնում այնտեղ, որտեղ սպասելի էին մտքեր : Եւ այդ անուանացանկերը լրիւ չեն . ժամանակակից հայ դրոզներին թուարկելիս, ինչպէ՞ս կարելի է մոռանալ պրն . Ա. Զօվանեանին, որ, ի միջի այլոց, այնքան բան արեց իր հայրենիքը Ֆրանսիայում ճանաչել աւլու համար . գիտնականներ թուարկելիս ինչպէ՞ս մոռացութեան տալ պրն . Աճառեանին՝ նշանաւոր լեզուարանին եւ բանասէքին»<sup>31</sup> :

Հ. Աճառեանի մասին Մեյէն մեծ գովեստով է արտայայտուել ոչ մի-այն նամակներում կամ որեւէ առիթով, այլև նրա աշխատութիւնների ժամանակած գրախօսականներում, ի լուր բոլորի : Այսպէս օրինակ. «Հայ րարբանների դասակարգում» աշխատութեան Փրանսերէն հրատարակութեան դրախօսականը սկսում է «Պրն. Աճառեանը իր ողջ կեանքը նուիրել է իր մայ-րէնի լեզուի՝ հայրէնի ուսումնասիրութեան» տողով և եղրափակում է հե-տեւայներով. «Նրա գիտական արժանիքը երեւան է գալիս նրա հրատարա-կութիւնների մէջ : Ես, որ գիտեմ, թէ ինչպիսի՞ կամք, սիրով կ'ատէի՝ հերո-սութիւն անհրաժեշտ եղաւ նրան՝ իր գիտական կրթութիւնը ձեռք բերելու համար, թէ նիւթական ու բարոյական ինչպիսի՞ պարմաներում երկար տարի-ներ, երբեք չժուացող յարատուութեամբ շարունակեց հետագոտութիւններ, որոնք քիչ են իրախուսուել, այսուղ ուղղում եմ անպայման ասել, թէ ինչպիսի՞ հիացմունք ունեմ ու միայն նրա գիտութեան, նրա աշխատանքային հազուա-գիւտ կորովի, այլև նրա բնաւորութեան նկատմամբ»<sup>32</sup> :

Ոչ միայն զրաւոր, այլև բանաւոր ձեռվով Մեյէն հրատարակայնօրէն յայտնել է իր յասուկ ոէրը, յարզանքը եւ բարձր կարծիքը Հ. Աճառեանի նր-կատմամբ : 1931 թ. Մայիսին Արեւելքում ճանապարհորդելիս, Մեյէն այե-լում է Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանը, որի շրջանաւարտներից էր Հ. Ա-ճառեանը : Այդ ժամանակի «Նոր Լուր» հայկական թերթը «Պրոֆ. Մեյէ այցելած է Կեդրոնական վարժարան եւ Ղալաթիոյ եկեղեցին հաղորդագրու-թեան մէջ գրել է<sup>33</sup>. «Եղանակուր արեւելքակտութեանկան Պրոֆ. Մեյէ այսօր (Կիրակի, 11 Մայիս 1931 — Մ. Այցելած է Կեդրոնական վարժարան. պը-րութիւնուցիւը ըլլալով Կեդրոնականի նախկին աշակերտ, բազմահռուս բանասէր եւ լեզուագէս Պ. Հրաչեայ Աճառեանի, փափաքած է այցելել անոր ուսած վարժարանը : Աշակերտութիւնը հասացուած է սրահը, ուր տնօրէնը ներկայացուցած է պրոֆեսորը եւ ինդքսած է քանիք մը քաջալերական խօսք ու-սանողութեան համար : Պրոֆեսորը Փրանսերէն լեզուով խանդավագ խօսքեր ուղղած ե ըսած է, թէ ինք համակրութիւն յայտնելու եկած է և տեսնելու այն վարժարանը, ուր չնշան են Փասիքօրի հաստատութեան աշխատակից գիտուն Մանուէլեան եւ Պ. Աճառեան, եւ որոնց մասին լաւագոյն գաղափարը ունեցած է, եւ իրեն համեմած է պարտականութիւն համարած է գալ այցելել :

31 Revue Critique, հատ. 83, 1917, էջ 322:

32 Journal Asiatique, 1909, էջ 559-560:

33 Նոր Լուր թերթը հազարդել է մաեւ, որ 1931 թ. Մայիսի 9ին, Պալսի համայս-րանի իրաւարանական բաժնի սրանում Մեյէն դասախոսն է «կեզու և հաղակարգութիւն» քե-մայազ. «Խակայն — զբա մեզ ամիկն Մեյէն իր նստակում (11 նոյ. 1903)», Թաքինը բառուն կիրապար յարձակուեցին մըր (Մեյէի) վրայ այս բանի համար, որ նա չասաց, թէ հերե-րը թուրքեր էին : Դասախոսութեամբ յարգը օրը (թէ՞ երկու օր յետոյ) Պալսից մեկնեցինք-պրե : Ծրամզիլը, որ այն ժամանակ դասախոս էր Կ. Պալսում, մեզ ասաց, թէ լաւ կը իմիր, որ հեռանանք երկրից»:

«Պատմած է, որ Հ. Աճառեան ի՞նչ անձկութեան մէջ կ'աշխատէր եւ զմայի հի հաստատամառթեան եւ բեղուն ընդունակութեան պանծալի օրինակ մը կ'ընծայէ՝ ամէն ակնածանքի դիտուն մը Հանդիսանալով։ Պրոֆեսորը այցելած է յետոյ դասարանները<sup>34</sup> և «Խապորաթուարը»։ Պրոֆեսորը այցելած է նաև Ղալաթիոյ եկեղեցին»<sup>35</sup>։

Ժամանակակիցները երանի են տուել Մեյէին, որ Հայոց լաւագոյն լեզուարանը նրա աշակերտն է։ «Երանի՛ պ. Մեյէին — զրել է Կ. Բամաջնաշնորհ, որ Աճառեանի հման յամառ աշխատող եւ բանիքուն աշակերտ մ'ունեցած է»<sup>36</sup>։ Կամ Մեյէի համար առանձին պատիւ են Համարել նշելով, թէ Աճառեանը նրան է աշակերտէլ. Ա. Զօպանեանը 1936 թ. Մեյէի ժահուան առթիւ զրել է. «Իր աշակերտներէն յիշելու արժանի լեզուարաններ եղած են Դաւիթթ-Բէկի Աճառեանը վարդապետը... եւ մանաւանդ յայտնի լեզուարան Հրաշեայ Աճառեանը՝ Հայ լեզուարաններու մեծադրյալը։ Մեյէի կը հպարտանար Աճառեանով, զոր ջերմօրէն կը սիրէր եւ որուն աշխատութեան կը հետեւէր ուշաղրութեամբ»<sup>37</sup>։ Մեյէի ժահուան առթիւ Հանիկան Ամսօրեայն եւ Հայոցէտ պըրով. Ֆրէտէրիք Ֆէյտին բաւարարուել են յիշատակելով միայն Աճառեանին որպէս Մեյէի հանրայայտ աշակերտ. «Անոր մէկ ուրիշ արժանիքն է Հայոցի սութեան համար — զրել է Հանիկան», որ Հայոցուցած է կարող աշակերտներ, որոնց կարգին պիտի յիշատակուի նաև Հայ լեզուարանը Հրաշեայ Աճառեան»<sup>38</sup>։ Պրոֆ. Ֆէյտին զրել է. «Այսպիսի դիտուն ուսուցիչ մը ունեցաւ անչուշու շատ աշակերտներ, որոնցմէտ քանի մը հոգի արդէն մեծ տեղ զրաւած են լեզուարանութեան մէջ։ Միայն մէկը նշանակելով պիտի զոհանամ, որովհետեւ ասիկ բոլոր Հայերուն ծանօթ է... Հրաշեայ Աճառեան, Երեւանի համայստանին ուսուցիչը»<sup>39</sup>։

Մեյէի եւ ժամանակակիցների հիացմունքը Հ. Աճառեանի նկատմամբ ծնունդ է առել Հայ մեծ լեզուարանի աշխատութիւնների ճիշտ արժէքաւորութից, որոնք մեծ ժամանակ լույս են տեսել Հայերէն, մի քանիսոր Փրանսիէրէն եւ դերմաններէն, իրաւամար արժանացնել են Հայ եւ Երուպացի լեզուարանների ու րուհասէրների բարձր հաւատութեան։ Նրան ըստ արժանույն, առաջինը եւ ամենաբարձր զնաշատողներից է եղել նրա ուսուցիչ Մեյէին, որովհետեւ նա էր ամենից լաւ բժրոնում այդ հետազոտութիւնների խորութիւնը։ Հետեւարար, Երուպական մասնակիուական մամուլում դրանց մասին իր հրապարակած հե-

34 Այսի տիկին Սոփիկ Աճառեանն ամուսնուց լած լինելով՝ մեզ պատմեց հետեւնայը. Մեյէն դասարաններում որոնել է Հ. Աճառեանի դիմանկարը և չգտնելով՝ իր զարմանքը յայտնել տօնքէթին։ Սա Աճառեանից նամակալ յինդրել է մի լուսնիկար դպրոցի սրահում կախելու եւ ուրիշ անզամ ամօրով չմնալու համար։ Աճառեանը նրան ուղարկել է մի փոքրիկ լուսանկար, չպատճենվ, որ մի ճանօր իւղանկարի նրան անմահացնի պատասխի վրայ։ Նկարչիսին ասել է. «Թու՛ք արտիստներ, ուղոր է՛ խարելու։

35 Նոր Հուր քերքը 1931 թ. Մայիսի 12ի հասրդագրաւթեան մէջ զրել է. «Պրոֆ. Մեյէ, որուն Կենդրուական վարժարան այցելուրինը զրած էիմ երեկ, այս առջել թննեց Ղալաթիոյ եկեղեցւոյն պատկանող երկու ձեռագիր Աւետարաններ, որոնք իրք հեռած մեծ արժէկ կը ներկայացնեմ։ Պրոֆ. Մեյէ այդ ճենացիթիւնը մասին մաթրաման բացատրութիւններ տառած։

36 Բանասէր, 1902, էջ 320։

37 Անահիտ, 1936, թ. 5-6, էջ 28։

38 Հանդէս Աժառեայ, 1936, էջ 406։

39 Բաղմագիտ, 1937, էջ 39։

դինակաւոր զասախօսութիւններով, գիտական ընկերութիւնների նիտսերում տուած հազորումներով նա Հ. Աճառեանին եւ նրա հետազօտութիւնները ծանօթացքել է լեզուարանների եւ լանասէրների չըջանակներում։ Այսպէս օրինակ, Փարփղի Լեզուարանական ընկերութեան նիտսերի արձանագրութիւնների մէջ կարելի է կարդայ, որ Ընկերութեան մշտական քարտուղար Մեյէն այսինչ նիտսում ընթերցել է Աճառեանի մի դիտողութիւնը հայ բարբառադիտութեան վերաբերեալ (Տե՛ս *Bulletin de la société de linguistique de Paris*, 1908, էջ XIII), կամ ամփոփել է Աճառեանի «Հայերէն սառուղարանութիւնները յօդուածը *Bulletin de la société de linguistique de Paris*, 1916, էջ 122)։ Փարփղի Հայագիտական ընկերութեան (*Société des Etudes arménienes* 1927 թ. Յունուարի 9ի նիտսի արձանագրութեան մէջ կարդում ենք, թէ Մեյէն հազորգել է Հ. Աճառեանի՝ Հայոց լեզուի ստուգարանական մեծ բարեգանի հրատարակութեան մասին (*Revue des Etudes arménienes*, 1927, հատ. 7, էջ 354)։ Այդ զէպքերում Մեյէն մանրամասն շարագրել եւ մեկնաբանել է Հ. Աճառեանի մի կարեւոր ուսամնափրութիւն։ Այսպէս, «Բննութիւն Ղարաբաղի բարբառին հետազօտութիւնը Մեյէն ամփոփել է 10 էջում<sup>40</sup>, որովհետեւ, ըստ նրան, Աճառեանի տեղեկութիւնները հաւասուի են և շատ մեծ կարևորութիւն ունեն թէ՛ Հայերէնի պատմութեան եւ թէ՛ ընդհանուր լեզուարանութեան համար։ Եւ բացի այդ, թերեւս գիրքը քիշ տարածում կ'ունենայ, քանի որ Հայերէն է զրուած եւ տպագրուած Վաղարշապատում։ Հայերէն կարդացող օտար լեզուարաններ միշտ էլ սակաւաթիւ են եղել։

Մեյէն անշուշն անհամբեր սպասում էր, որ վերջ գտնէին քսանական թուականների հասարակ ուսուցիչ Աճառեանի աստանդական թափառումները եւ, որ կարեւորն էր, նա զասախօսական լայն գործունէութիւն ծաւալէր բարձրագոյն զպրցում։ Այդ ցանկութիւնը իրականանում է, երբ Հայաստանի Խորհրդային կառավարութիւնը Հ. Աճառեանին հրամիրում է մշտապէս զասախօսելու Երեւանի նորահաստատ Հայկական Պետական Համալսարանում։ Մեյէն այս առթիւ իր ուրախութիւնն է յայտնել մամուլում «Հ. Ս. Խ. Հ. Պետական համալսարանի գիտական տեղեկագրի» առաջին հատորի մասին դըրախօսութեան մէջ (1925 թ.)։ «Ծնորչիւ այն ինքնավարութեան, որ վայելում են Խորհրդային Հանրապետութիւնների Միութեան անդամները, Հայերը կարդրացնել են Երեւանում կազմակերպել բոն Հայկական համալսարան, որուն բանասէր եւ լեզուարան Հ. Աճառեանը վերթապէս գտել էր իր տաղանդին եւ գիտելիքներին պատշաճ տեղը» (*Revue des Etudes arménienes*, հատ. 5, 1925, 187—188)։

#### ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՒԱՍԵԱՆ

Երուսաղէմ  
(Նար. 1)

40 *Journal Asiatique*, 1902, էջ 501.